10 (92). ԹԱՔԱՎՈՐՆ ՈՒ ԴԸՄԸՐՉԻՆ

Թաքավորին մեկն օր կէլլէ լըլին հետ պըտըտի կը, պըտըտած ժամանակնին մէ փողոցըմ կէրթա քաղաք տեղ։ Փողոցը վեր էրթըլու ժամանակ մէ սիրուն կնիկըմ վլաս կէնէ, ինչ կէնէ, մեղի այան չէ. ջուրը դոնեն դուս կը թափե, թևերն ու կեկսը[1] բաց, էնքան տեսքով։ Էդ թաքավորը էս կնկանը հ՚ըռաստ քուքա, լըլին կըսե, թե.— Լըլը՛, էդման է մա՞րթ ըլլի։

Թաքավորը միտքը փոխե կը, կըսե.— Ես էդոր մարթուն պիտի դտնիմ։

Հարցընե կը փողոցը, թե էդ կնիկմարթը ո՞ւմ կնիկն է, հարցնե կը դրկցնուն։

Դրկցնին կըսեն.— Էդիկ դըմըրչընոցին գլխավոր ուստին կնիկն է։

Կէրթա էս թաքավորը էդոր էրիկը գտնի կը։ Միտքը թրել է, օր էդ կնիկմարթը ձեռնեն առնե պիտի։ Էսիկ վեճ կը բանա մարթուն հետ։

Թաքավորը դըմըրչուն կըսե.— Ինձի մէ փութըմ բորա՛ է պետք, ինձի համար պիտի պատրաստես։

Դըմըրչին մտածե կը օր բորան թոփ չի ըլլի։

Թաքավորը կըսե.— Թե չէ հա՞, քեզի կսպանեմ, կնիկդ ձեռնեդ կառնեմ։

Էսիկ կելլե իրեն ըսնըֆը բիրըդուն կըսե թաքավորին պայմանը. կըսե. «Ինչ էնեմ օր չտարվիմ, կնկանս չտանի»։ Իրենց համար

---

1 Կուրծք (Ս. Բ.)։

հնարավորութուն կը գտնին. միջոց[1] կուզեն թաքավորեն, թե ինչքան վախթ կուտա որ բորան թոփ էնե։

Թաքավորը դըմըրչուն կըսե.— Ինչքա՞ն միջոց կուզես։

Դըմըրչին կըսե.— Ամիսըմ։

— Լավ,— կըսե թաքավորը ու ամի[illegible] միջոց կուտա։

Ամիսըմ միջոց տալեն հ'ետև թաքավորը կէրթա։ Դըմըրչին է, պատրաստութուն կը տեսնի որ բորան թոփ էնե։ Տասնըհինգ օրը կանցնի, ամսու կիսուն ըլըըն վազելով քուքա ուստին կը գտնի, կըսե.— Ուստա՛, թաքավորը վախճանավ, փութըմ մըսմար մըխ կուզեն որ գուբին մխեն։

Դըմըրչին էդիկ որ կիմանա, թրնգի կը խաղա ու կըսե.— Բորա, այ քեղի մատաղ, աստված բորան մսմարի դառուց։

Դըմըրչին կըսե.— Մե ժամվանըմ ես փութըմ մսմար կուտամ։

Ընըրֆը ըրոպպեական փութըմ մսմար կուտա։

— Է՜ աստված,— կըսե,— վեվ ինչ մտքի էր օրա՝ կատարվավ։

Էդ ուստաբաշին դըմըրչուն կըսե.— Իստեղ աշե որ աստվածութունը բորան մխի դառուց։

---

1 *ժամանակ (Ն. Բ.)։*